

Մենթալ թվաբանություն

Տարրական դասարանների համար
68 ժամ(շաբաթական 2 ժամ)

Մենթալ թվաբանությունը արևելյան (սորոբանի, հաշվիչի) վրա հիմնված արագ բանավոր հաշվարկի մեթոդ է: Աբակը (սորոբանը, հաշվիչը) հանդիսանում է մենթալ թվաբանության առանցքը: Աբակի վրա հաշվել սովորելուց հետո երեխան սկսում է մտավոր հաշվարկը: Մենթալ թվաբանությունը զարգացնում է սովորողի գլխուղեղի երկու կիսագնդերը, ինչպես նաև զարգանում է սովորողի կենտրոնացումը, տրամաբանությունը, ստեղծագործական, վերլուծական մտածողությունը, տեսողական հիշողությունը: Մենթալ թվաբանության դասերին կիրառվում են ֆլեշ քարտեր, զարգացնող և տրամաբանական առաջադրանքներ, մենթալ թելադրություններ, մրցույթներ, ձեռքերի մարզումներ, ուղեղը զարգացնող մարզանքներ և այլն, որոնք նպաստում են մոտորիկայի, լսողական և տեսողական հիշողության, աջ և ձախ կիսագնդերի զարգացմանը:

Նպատակ

- **Ներկայացնել** մենթալ թվաբանության մեթոդիկան և դրա առանձնահատկությունները:
- **Զարգացնել** տրամաբանությունը, տեսողական և լսողական հիշողությունը:
- **Նպաստել** ուշադրության կենտրոնացմանն ու արագ կողմնորոշմանը:
- **Արժևորել** մաթեմատիկական մտածողությունը, որը կնպաստի կյանքի տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելուն:

Խնդիրներ

- Ստեղծել դրական և ապահով միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող իրեն ապահով և կարևոր կզգա, որն էլ կնպաստի ուսումնառության արդյունավետությանը:
- Աշխատանք տանել բարձր առաջադիմությունն ապահովելու և սովորողներին օլիմպիադաների ներկայացնելու ուղղությամբ:
- Հաճախակի կազմակերպել մրցույթներ, ցուցադրական ելույթներ:

Վերջնարդյունքներ

Խմբակի անդամները կկարողանան՝

- Աբակի միջոցով սովորել կատարել մենթալ հաշվարկ:
- Կտիրապետեն մենթալ թվաբանությամբ աշխատելու կանոններին:
- Կզարգանա ձեռքերի հավասարաչափ կիրառման հմտություն և արագություն:
- Աբակուսի օգնությամբ կկատարեն մինչև եռանիշ թվերի գումարում և հանում:
- Մտային հաշվարկ կատարել մենթալ թվաբանության միջոցով:
- Արագ գումարել և կհանել միանիշ, երկնիշ և եռանիշ թվեր՝ 7-10 գործողությամբ:

Ճրագիր

Ձ.	Բովանդակություն	Նպատակ	Ժ.
	Թեմա 1:Պարզ ընկերներ:	<ul style="list-style-type: none"> • ծանոթացնել աշակերտներին «Պարզ ընկերներ» կանոնին,աբակուսի գումարման և հանման եղանակներին, • զարգացնել մաթեմատիկական մտածողությունը, տրամաբանությունը, ուշադրությունը և հիշողությունը, • դաստիարակել աշխատանքի մեջ համառություն, հաստատակամություն և ճշտապահություն: 	16
1.	Գումարում և հանում 4-ի սահմանում		1
2.	Գումարում և հանում 5-ի		1

	սահմանում		
3.	Գումարում և հանում 6-ի սահմանում		1
4.	Գումարում և հանում 7-ի սահմանում		1
5.	Գումարում և հանում 8-9-ի սահմանում		2
6.	Գումարման և հանման կանոնները 10-29-ի սահմաններում		2
7.	Գումարման և հանման կանոնները 10-49-ի սահմաններում		2
8.	Գումարման և հանման կանոնները 10-99-ի սահմաններում		2
9.	Գումարման և հանման կանոնները եռանիշ թվերի սահմաններում:		2
10.	Պարզ ընկերների ամփոփում:		1
11.	Թեստային աշխատանք		1
	Թեմա 2:Փոքր ընկերներ:	<ul style="list-style-type: none"> • ծանոթացնել աշակերտներին «Փոքր ընկերներ» կանոնին երկնիշ թվերի համար և դրա գործնական կիրառմանը, • կատարել վարժություններ, ինչպես նաև • զարգացնել տրամաբանական մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը, • ձևավորել հետաքրքրություն մենթալ թվաբանության, մաթեմատիկայի հանդեպ, ստեղծել փոխօգնող միջավայր: 	14
12.	5 թվի կազմություն:Փոքր		1

	ընկեր կանոն 4:		
13	5 թվի կազմություն:Փոքր ընկեր կանոն 4:		1
14.	5 թվի կազմություն:Փոքր ընկեր կանոն 3:		1
15.	5 թվի կազմություն:Փոքր ընկեր կանոն 2:		1
16.	5 թվի կազմություն:Փոքր ընկեր կանոն 1:		2
17.	Գումարման և հանման կանոնները 10-49 թվերի սահմանում:		2
18.	Գումարման և հանման կանոնները 10-99 թվերի սահմանում:		2
19.	Գումարման և հանման կանոնները եռանիշ թվերի սահմանում:		2
20.	Կրկնություն:Թեստային աշխատանք:		2
	Թեմա 3:Մեծ ընկերներ:	<ul style="list-style-type: none"> • ծանոթացնել «Մեծ ընկերներ» կանոններին և դրանց գործնական կիրառմանը, • զարգացնել տրամաբանական մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը, • ձևավորել հետաքրքրություն մենթալ թվաբանության, մաթեմատիկայի հանդեպ, ստեղծել փոխօգնող միջավայր: 	18
21.	10 թվի կազմություն:Մեծ		2

	ընկերներ 9,8:		
22.	10 թվի կազմություն:Մեծ ընկերներ 7,6,:		2
23.	10 թվի կազմություն:Մեծ ընկերներ 5,4:		2
24.	10 թվի կազմություն:Մեծ ընկերներ 3,2,1:		2
25.	Անցում 50/100:Գումարման և հանման կանոնները 10-99 թվերի սահմանում:		2
26.	Գումարման և հանման կանոնները 100-299 թվերի սահմանում		2
27.	Գումարման և հանման կանոնները 100-599 թվերի սահմանում		2
28.	Գումարման և հանման կանոնները 100-999 թվերի սահմանում		2
29.	Կրկնություն:Թեստային աշխատանք:		2
	Թեմա 4:Ընտանիք:	<ul style="list-style-type: none"> • ծանոթացնել «Ընտանիք» կանոններին և դրանց գործնական կիրառմանը, • կատարել նեյրոգիմնաստիկայի վարժություններ • զարգացնել տրամաբանական մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը, 	8
30.	Ընտանիքի կանոն 6,7:		2
31.	Ընտանիքի կանոն 8,9:		2
32.	Գումարման և հանման կանոնները 10-99 թվերի սահմանում:		2

33.	Գումարման և հանման կանոնները 10-99, 100-999 թվերի սահմանում:		2
	Թեմա 5:Անգան:	<ul style="list-style-type: none"> • ծանոթացնել «Անգան» կանոններին և դրանց գործնական կիրառմանը, • զարգացնել տեսողական և լսողական հիշողությունը • լաբիրինթների և քարտերի միջոցով զարգացնել տրամաբանական մտածողությունը: 	8
34.	Անգան գումարում:		3
35.	Անգան հանում		3
36.	Կրկնություն,թեստային աշխատանք:		2
37	Ընդհանուր կրկնություն,օլիմպիադայի նախապատրաստում:		4

Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար՝ Զ.Ջակոբյան

